

**Մարիանա ՍԱՐԳՍՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ  
ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Հոդվածում քննության են ենթարկվում Հայլենդիզմ, Քեյյարդ, Քլայդսայդիզմ բառ-հասկացություններն ու դրանց իմաստային դաշտը, ինչպես նաև այդ հասկացությունների դերը շոտլանդական ազգային ինքնության ձևավորման և կայացման պատմական փուլերում: Հետազոտության նպատակն է ցույց տալ, թե թվարկված հասկացություններն ինչ ազդեցությունն են ունեցել ազգային դիսկուրսի ձևավորման և Շոտլանդիայի մասին պատկերացումների մասսայականացման գործում:*

**Բանալի բառեր.** *ազգային ինքնություն, դիսկուրս, Հայլենդիզմ, Քեյյարդ, Քլայդսայդիզմ*

Բրիտանական ինքնությունը ձևավորվել է այնպիսի ինստիտուտների հիման վրա, ինչպիսիք են բրիտանական պետականությունը և բանակը, որոնք Շոտլանդիայում ընկալվեցին որպես պետական ինքնության խորհրդանիշներ: Սակայն 19-րդ դարի սկզբին պետական ինքնությունը շոտլանդական իրականության մեջ նորովի արժևորման խնդրի առաջ կանգնեց, և հենց այդ նույն ժամանակաշրջանում շոտլանդական ինքնությունը վերահաստատվեց որպես ազգային ինքնություն, որի ձևավորման փուլերի առանձնահատկությունները հատուկ հետազոտական աշխատանքի օբյեկտ են: Սույն հետազոտության մեջ քննության են ենթարկվում այն առանցքային հասկացությունները, որոնք իրենց դրական և բացասական առնչականություններով հանդերձ, զգալի ներդրում են ունեցել շոտլանդական ազգային ինքնության ձևավորման և կայացման գործում: Այդ հասկացություններն են՝ Հայլենդիզմը /կամ Թարթանիզմը/, Քեյյարդը և Քլայդսայդիզմը, որոնք հիմք են ծառայել ազգային դիսկուրսի ձևավորմանը: Վերջիններս իրենց հերթին առաջ են բերել Շոտլանդիայի և շոտլանդացիների մասին կարծրացած, նաև խիստ իդեալականացված պատկերացումներ: Այդ դիսկուրսները<sup>1</sup> ծագել են նշանակալից որոշակի իրադարձություն ընդգրկող պատմական ժամանակահատվածում /Caughie, 1982: 115-122/, որոնք լայն շրջանառության մեջ են դրվել զանգվածային միջոցների շնորհիվ՝ որոշ իմաստով պատճառ հանդիսանալով շոտլանդական ինքնության մասին ոչ այդքան իրական պատկերացումների ձևավորման համար /Craig, 1982: 7-15; McArthur, 1982: 40-69 և այլք/: Այնուամենայնիվ, վերջիններս ազդեցիկ դերակատարու-

թյուն են ունեցել շոտլանդական ինքնության յուրօրինակության առասպելը տարածելու և պահպանելու գործում:

Առասպելը ձև և բովանդակություն է հաղորդում մարդկանց կողմից իրականության ընկալման համար, և պատմական փաստերից այն տարբերվում է նրանով, որ առասպելը հիմնված է այլաբերության վրա, որը դրսևորվում է խորհրդանշական պատկերների և կերպարների միջոցով, որոնք էլ մարդու գիտակցականում կերտում են իրականության մասին պատկերացումներ, որոնք դրսևորվում են կոլեկտիվ գիտակցականի մակարդակում /Schorer, 1968: 354-358/: Շոտլանդիայի մասին պատկերացումները տևական ժամանակ ենթարկվել են առասպելականացման միտմանը, ինչպես հենց իրենց՝ շոտլանդացիների, այնպես էլ այլոց կողմից, ինչի արդյունքում առաջ են եկել որոշակիորեն կաղապարված պատկերացումներ, ինչպիսիք են՝ *Հայլենդիզմը (Թարթանիզմը)*, որով ընդգծվում է հայլենդցու ազնվական և հերոսական կերպարը, *Քեյլարդը*, որով շեշտադրվում է Շոտլանդիայի՝ որպես ավանդական արժեքներ կրող համայնքի տեսլականը և *Քլայդսայդիզմը*, որով առաջին պլան է դուրս բերվում քաղաքի՝ հաճախ բիրտ դիմագիծը: Այս երեք կարծրացած առասպելները լայն քննադատության առարկա են եղել, և անհերքելի է, որ վերջիններում առկա է Շոտլանդիայի կարծրատիպային պատկերը, և հենց այս պատճառով էլ հասկանալի է իրականության հետ վերջինիս անհամատեղելիությունը: Սակայն, մյուս կողմից, Շոտլանդիայի պարագայում, պատկերացումների ոչ ճշգրիտ լինելու փաստը երկրորդական է, եթե հաշվի է առնվում այն հանգամանքը, որ խորհրդանշական ճշմարտությունն առասպելի պարագայում առավել իմաստավորված է: Նշված դիսկուրսներում Շոտլանդիան պատկերվում է որպես ողջ աշխարհից կտրված և ինքնատիպ տեղանք, որտեղ կերտվում են խիստ ռեզիոնալ բնույթի մարդկային պատմություններ: Արտաքին աշխարհից կտրված այս ինքնատիպ պատկերի կերտումը այս կամ այն կերպ նպաստել է ազգային ինքնության գաղափարի ձևավորմանը: Սեփական «ես»-ի ճանաչման համար անհրաժեշտ է այնպիսի մշակութային կայուն կողմնորոշիչների համակարգ, որը համընդհանուր է տվյալ համայնքի բոլոր անդամների համար:

#### **Հայլենդիզմը՝ որպես շոտլանդական ինքնության դրսևորում**

Ներկայումս, բավական լայն տարածում ունի այն տեսակետը, որ շոտլանդական ինքնությունը գրեթե հավասարազոր է Հայլենդսի ինքնությանը: Թարթանը, կիլտը, կլանային համակարգը և Հայլենդսի խաղերը մշակութային այն դրսևորումներն են, որոնք, ընդհանուր առմամբ, կարող են վերագրվել նաև շոտլանդական մշակույթին: Այնուամենայնիվ, այն փաստը, որ Հայլենդսի մշակութային արտահայտությունները կարող են դիտարկվել որպես շոտլանդական, համեմատաբար նոր երևույթ է:

Մինչև 18-րդ դարի վերջին տասնամյակը Շոտլանդիան բաժանված էր երկու մասերի: Լոուլենդսը (անգլ.՝ Lowlands, հարթավայրային Շոտլանդիա) մշակութային և տնտեսական առումով զարգացած շրջան էր, որի բնակչությունն աչքի էր ընկնում կրթվածության բավական բարձր մակարդակով: Մեծ թիվ էին կազմում արհեստագործները, կրթված և արհեստկրատ վերնախավը և առևտրականները: Այս տարածքը կառավարվում էր Շոտլանդիայի խորհրդարանի կողմից՝ միավորված Շոտլանդիայի գահի ներքո: Լոուլենդսը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես արագ զարգացող շրջան՝ ի տարբերություն Հայլենդսի:

Մինչև 18-րդ դարի սկիզբը, Հայլենդսում (անգլ.՝ Highlands, լեռնային շրջաններ) գերիշխում էին կլանային (ցեղային) կապերը, իսկ առաջնորդը՝ որպես այլ կլանների վրա մեծ ազդեցություն ունեցող գերագույն ուժ: Կլանային համակարգում անընդհատ տեղի էին ունենում ընդվզումներ՝ տարածքներն ընդլայնելու և ազդեցության ոլորտն ընդարձակելու նպատակով:

Հայլենդսը, ընդհանուր առմամբ, աղքատիկ շրջան էր, և շոտլանդացիների ներկայացմամբ այս հատվածի բնակիչներն աչքի էին ընկնում յուրահատուկ բարբարոսությամբ, իսկ տարածքը սովորաբար բնութագրվում էր որպես հսկայական ամայի վայր: Այսպիսի նկարագրությունը ճշմարիտ է՝ հաշվի առնելով հարթավայրային և լեռնային շրջանների միջև մշակութային խիստ բևեռացվածությունը: Լոուլենդսում գերիշխող էր իռլանդա-կելտական, նորվեգական և անգլո-սաքսոնական ազդեցությունների ներքո ձևավորված մշակույթը, իրավական համակարգը ամբողջությամբ հիմնված էր հռոմեական իրավունքի վրա և, վերջապես, ամենակարևորը՝ Լոուլենդսում խոսում էին անգլերենի շոտլանդական բարբառով: Ի հակադրություն հարթավայրային շրջանի՝ Հայլենդսում շեշտադրվում էր պիկտերից և կելտերից ժառանգած ինքնությունը: Անհատականությունն ընդգծվում էր նաև կելտական հագուստի և լեզվի՝ գաելերենի (անգլ.՝ Gaelic) միջոցով: Կրոնական առումով երկու շրջանների միջև նույնպես առկա էին տարբերություններ: Լոուլենդսում ժողովրդի և վերնախավի մեծամասնությունը բողոքականության արեսբիտերական ճյուղի հետևորդներ էին, իսկ Հայլենդսում գերակշռող էին հին հռոմեական կաթոլիկ ավանդույթներով ձևավորված Եպիսկոպոսական եկեղեցու հետևորդները: 17-րդ դարի ընթացքում վերջինիս հետևորդների թվաքանակի խիստ աճով պայմանավորված առաջ եկավ ևս մի մեծ պատենշ երկու շրջանների միջև, որն անվանվեց *Celtic Fringe* (բառացի՝ Կելտական գոտի՝ հատված որտեղ տարածված է կելտական լեզուն և մշակույթը) /Devine, 2006: 3-30/:

Անհերքելի է, որ 1707 թվականի Միավորման ակտն իր հերթին նպաստել է երկու շրջանների միջև անջրպետի խորացմանը: 1745 թվականի յակոբիտների վերջին ապստամբությունը սկիզբ առավ Հայլենդսից, սակայն տապալվեց 1746 թվականի Քալլոդենի ճակատամարտում

բրիտանական բանակի կողմից: Այն փաստը, որ յակոբիտների կազմում ընդգրկված էին հիմնականում հայլենդցիներ, առաջ բերեց բրիտանական կառավարության մտահոգությունը, և հենց այդ պատճառով 1746 թվականին ընդունվեց Ժառանգության իրավունքի ակտը (the Heritable Jurisdiction Act), որը միտված էր վերջ տալու կլանային համակարգին, իսկ 1746 թվականին ընդունվեց Սահմանափակումների մասին ակտը (the Act of Proscription), որով արգելվեց ավանդական հագուստի կրումը: Բրիտանական կառավարության կողմից նույնիսկ զորք ուղարկվեց, որպեսզի հսկողություն սահմանվեր օրենքների կիրառության նկատմամբ: Վերջիններիս հաջորդեց Զինաթափման ակտի (the Disarmament Act) կիրարկումը, որը, թեև ընդունվել էր 1715 թվականին, մինչ այդ չէր դրվել կիրառության մեջ: Այս իսկ հանգամանքներով պայմանավորված 1860-ական թվականները պատմության մեջ հայտնի են «Հայլենդսի մաքրումներ» (*Haighlands Clearances*) անվանմամբ: Թ. Դիվայնը և Փ. Ուոմեքը համամիտ են այն կարծիքի հետ, որ 1740-ականներից մինչև 1860 թվականները Հայլենդսի մշակույթը գրեթե ոչնչացվել է /Devine, 1987: 1-8; Womack, 1989: 4-26/:

Հաշվի առնելով այսպիսի մասնատվածությունը՝ կարելի է ենթադրել, որ այդ ժամանակահատվածում անհնար էր խոսել միասնական շոտլանդական ինքնության մասին և նույնիսկ կարելի է ենթադրել, որ, հաշվի առնելով տվյալ իրավիճակում Լոուլենդսի թե՛ տնտեսական և թե՛ մշակութային առումներով առավել շահեկան դիրքը, հենց վերջինս էլ պետք է դառնար ազգային ինքնության հենքը: Սակայն, ինչպես վկայում են փաստերը, ճիշտ հակառակը տեղի ունեցավ: 18-րդ դարի վերջից սկիզբ առավ մի շարժում, որը ոգեշնչված էր Հայլենդսի մշակույթով, և Շոտլանդիայի պատմությունը սկսվեց դիտարկվել հենց Հայլենդսի համատեքստում: Այս շարժումը պատմության մեջ հայտնի է «Թարթանիզմ» կամ «Հայլենդիզմ» բառ-հասկացություններով:<sup>2</sup>

Թարթանիզմի ակունքը համարվում է Ջեյմս Մակֆերսոնի Օսիանի պոեմների ժողովածուն, որը հրատարակվել է 1760-1765 թվականներին: Հենց այս աշխատությունը շատ գիտնականների կողմից դիտարկվեց որպես թարթանիզմի առաջին դրսևորում: Ժողովածուն էպիկական պատմություն է, որտեղ Հայլենդցի կույր տավղահար Օսիանը պատմում է 3-րդ դարում ապրած Ֆինգալի հերոսական կերպարի մասին: Այս գործում Ջ. Մակֆերսոնի կողմից այն միտքն է առաջ քաշվում, որ շոտլանդացիներն առնչություն ունեն հին հույների հետ և որ շատ հին հունական սովորույթներ առկա են գաելական ժողովրդի մոտ:<sup>3</sup> Օսիանի պատմությունը, թեև հորինված, նշանակալից է երկու առումներով. առաջինը՝ Հայլենդսը այս պատմության շնորհիվ հայտնվեց ուշադրության կենտրոնում և երկրորդ՝ ոչ այնքան ճշմարտացի պատմությամբ էպիկական այդ աշխատությունը շոտլանդացիներին ներկայացրեց որպես հնագույն և հարգված մշակույթի կրողներ: Այս աշխատանքի շնոր-

հիվ փոխվեց Հայլենդսի նկատմամբ վերաբերմունքը /Whiters, 1992: 150-152; Devine, 2006/: Այն թույլ տվեց փոխել ոչ միայն շոտլանդացիների, այլև բրիտանացիների պատկերացումները, իսկ Հայլենդսը՝ լքված ու ամայի վայրից վերածվեց բնության հիասքանչ տեսարաններով առանձնացող մի վայրի:

Գրքի մասսայականացմանը հաջորդեցին Հայլենդսի՝ զբոսաշրջիկային կենտրոնի վերածելու փորձերը, այսինքն Օսիանի պատմությունը փոխեց Հայլենդսի նկատմամբ վերաբերմունքն առհասարակ, քանի որ հայլենդցիներին սկսեցին վերաբերվել ոչ թե որպես բարբարոսներ, այլև հնագույն շոտլանդական մշակութային արժեքների կրողներ:

Օսիանի պատմությունը մեծ ազդեցություն է գործել նաև Վալտեր Սքոթի վրա: Նրա ստեղծագործությունները կարելի է դիտարկել որպես թարթանիզի մարմնավորում, իսկ նրա նովելներում պատկերված Հայլենդսին բնորոշ պարագաները և սովորույթները պահպանվել են մինչ օրս: Նրա բոլոր ստեղծագործությունները հիմնականում ծավալվում են Շոտլանդիային և Հայլենդսին վերաբերող թեմաների շուրջ և հաճախ տեղի են ունենում հենց Շոտլանդիայում: «Ուեվլըրլի» պատմավեպում (1814թ.) Վ. Սքոթը վերակերտել է յակոբիտների շարժումը, և պատմում է այն մասին, թե ինչպես Էդուարդ Ուեվլըրլին, հանդիպելով յակոբիտներին, որոշում է միանալ նրանց: Վեպը պատմում է Հայլենդսի գողտրիկ բնության և չքնաղ տեսարանների, գեղեցիկ, քաջարի ու կրքոտ մարդկանց և նրանց մշակույթի մասին: Իրականում Վ. Սքոթի ստեղծագործությունները դարձան մի խառնարան, որի մեջ միահյուսված են շոտլանդական պատմությունը և Հայլենդսի ինքնությունը: Բ. Թրամփենների կարծիքով Վ. Սքոթի իդեալները պատմական իրադարձություններին փաստացիություն են տալիս, սակայն միևնույն ժամանակ զգացմունքայնություն է առաջ բերում /Trumpener, 1993: 685-731/: Նրա ստեղծագործություններում հայլենդցիները ներկայանում են որպես ազնվական մարտիկներ, ովքեր մարտնչում են ազնիվ նպատակների համար, մարդիկ, ովքեր սերտ կապի մեջ են բնության հետ, և որը համահունչ է լուսավորության դարաշրջանի գաղափարների հետ: Այս ամենը վերջնականապես փոխեց հայլենդցու կերպարի ընկալումը:<sup>4</sup>

Իհարկե այն փաստը, որ Հայլենդսի պատկերը դրոշմվեց շոտլանդացու գիտակցականում, միայն Սքոթի ձեռքբերումը չէր: Այդ ժամանակահատվածում Հայլենդսի արքայական գունդն արդեն ձևավորված էր, և այն համարվում էր իրապես շոտլանդական երևույթ և ընդունված էր որպես բրիտանական հայրենասիրության կարևոր խորհրդանիշ: Վերջինիս պաշտոնական համազգեստը նույնպես հիմնված էր Հայլենդսի խորհրդանշական պատկերների վրա: Այսինքն, այս փաստը նույնպես ընդգծեց *Հայլենդիզմի և Թարթանիզմի* գաղափարը և, ավելին, բացառեց *հայլենդիզմ և բրիտանականություն* հասկացությունները հակադրելու անհրաժեշտությունը:

Վ. Սքոթն այնուամենայնիվ մտավախություններ ուներ, որ Միությունն ուժեղ էր նաև իր բազմազանությամբ, և որ շոտլանդացիները հնարավոր է կորցնեն իրենց անհատականությունը որպես ժողովուրդ, քանի որ եթե չլինի անհատականության վառ դրսևորումը, ապա շոտլանդացիները կհայտնվեն անընդհատ ընդլայնվող անգլիական ազդեցությունների ներքո: Այդ մտավախությունն անհիմն չէր, քանի որ ինչպես նշվում է որոշ գիտնականների կողմից, 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին շոտլանդական վերնախավը խոր առնչություններ ուներ Անգլիայի հետ, ինչի պատճառով շոտլանդական հասարակությունը որոշ առումներով արդեն իսկ իր վրա կրել էր անգլիական մշակույթի ազդեցությունը: Մասնավորապես, 18-րդ դարի վերջին միտում կար Շոտլանդիայի պատմությունը համարելու ժամանակավրեպ, քանի որ այն այլևս չէր արտացոլում այդ հասարակության կյանքը, որի պատճառով պատմության ակադեմիական ուսուցանումը ընթանում էր անգլիական ազդեցության ներքո: Հետևաբար, Սմաութի եզրահանգմամբ՝ «Սքոթն իր գործունեությամբ փրկել է շոտլանդացիներին «անպատմություն» մնալու դժբախտությունից» /Smout, 1994: 8/: Ըստ Սմաութի, Վ. Սքոթի կերտած պատմությունն այնուամենայնիվ ստորադասվում էր Անգլիայի պատմությանը, քանի որ Սքոթը կերտել է Հայլենդսի երևակայական պատկերը, որը թեպետև առանձնանում էր Անգլիայի պատմությունից, այնուամենայնիվ մարտահրավեր չէր կարող նետել բրիտանական ինքնությանը /Smout, 1994/: Նմանատիպ եզրահանգում կատարում են նաև այլ հետազոտողներ՝ մասնավորապես Թ. Դիվայնը եզրահանգում է, որ Հայլենդիզմը առավելապես ուղղված էր հուզական կարիքները հոգալուն՝ առանց որևէ կերպ միտում ունենալով նսեմացնելու Միության գաղափարը /Devine, 2006/:<sup>5</sup>

**Քեյլարդի նշանակությունը շոտլանդական գրականության և մշակույթի համատեքստում**

19-րդ դարի վերջին Շոտլանդիայում առաջ եկավ գրականության նոր հոսանք, որի ներկայացուցիչներն իրենց ստեղծագործություններում կերտում էին Հայլենդսի խիստ զգացմունքային պատկերներ, որն, ինչ խոսք, երևան բերեց հաջորդ կարևոր ազգային դիսկուրսը՝ **Քեյլարդը** (անգլ.՝ Kailyard (cabbage patch), բառացի թարգմանությամբ «կաղամբի մարզիկ»): Չնայած այն հաճախ քննադատվում է իր պարզության և պահպանողական արժեքներ տարածելու համար, այնուամենայնիվ այս հոսանքը բավականաչափ ազդեցիկ էր և հաջողված հատկապես ծաղկող միջին դասի շրջանում: Շատ հեղինակներ որոշակի աղերսներ են ընդգծում Վ. Սքոթի աշխատանքների հետ, սակայն ի տարբերություն վերջինիս, Քեյլարդը Հայլենդսի պատկերը ներկայացնում էր ոչ թե պատմական համատեքստում՝ այլև հղում կատարելով իրական գյուղական, սահմանափակ միջավայր ներկայացնող կյանքին:

Քեյյարդ եզրույթն առաջին անգամ կիրառվել է 1895 թվականին Ջ.Հ. Միլլարի կողմից “The Literature of the Kailyard” աշխատանքում /Millar, 1895: 384-394/: Այս հոսանքի ներկայացուցիչներն էին եկեղեցական քահանաներ Ջ. Բարրին, Ս. Քրոքեթն և Յ. Մաքլարենը, որոնք, ըստ Ջ. Բլեյքի, իրենց ստեղծագործություններում կյանքը փորձում էին ներկայացնել այնպես, ինչպես այն երևում էր եկեղեցու պատուհանից /Blake, 1951: 43/: «Դասական իմաստով Քեյյարդը բնութագրվում է շոտլանդական ծխական տեսարանների հուզական և նոստալգիկ պատկերներով, հաճախ կենտրոնացած միայն եկեղեցական համայնքի մասին պատմությունների վրա, երբեմն նաև գյուղական մանկությունից մինչև քաղաքային զարթոնք (կամ ապականում) և կրկին վերադարձ դեպի հարազատ օջախ» /Knowles, 1983: 13/:

Այնուամենայնիվ, հարց է առաջանում այն մասին, թե, եթե այդքան աննշանակալից է այս շարժման բովանդակային և գաղափարախոսական կողմը, ապա ինչով է պայմանավորված Քեյյարդի կարևորությունը շոտլանդական գրականության և գրաքննադատության համար, կամ ինչով է պայմանավորված Քեյյարդ դիսկուրսի արդիականությունը և այն լայն իմաստային դաշտը և առնշանակությունը, ինչը եզրույթը ձեռք է բերել այսօրվա լեզվի և մշակույթի համատեքստում: Նույն ինքը Ջ.Հ. Միլլարը եզրույթը կրկին անգամ կիրառեց 1903 թվականին “Literary History of Scotland” աշխատության մեջ՝ որակելով Ջ. Ուիլսոնի դեռևս 1822 թվականին լույս տեսած “Light and Shadows of Scottish Life” ստեղծագործությունը որպես «մաքուր Քեյյարդ», որպես ածական, կիրառելով այն գրական ստեղծագործության որակական հատկանիշները նկարագրելու համար /Millar, 1903/: Հետազոտողների կողմից այս եզրույթը նույնպես կիրառվել է բնութագրելու Վիկտորիանական դարաշրջանի ողջ շոտլանդական գրականությունը: Մյուս կողմից Քեյյարդի առավել լայն ընկալման համար նշանակալից էր նաև Յ. Քեմբելի “Kailyard” աշխատությունը /Campbell, 1981/, որտեղ վերջինիս կողմից քննադատվում է այն մոտեցումը, որ Ջ. Բարրիի, Ս. Քրոքեթի և Յ. Մաքլարենի ստեղծագործությունները անտարբեր են փոփոխության և վերաիմաստավորման գաղափարներին: Կարելի է համարել, որ հենց այս ժամանակաշրջանից սկսվեց *Քեյյարդի* իմաստային դաշտի ընդլայնումը:

Ա. Բոլդը “Modern Scottish Literature” աշխատության մեջ չափազանց զգուշավոր մոտեցում է ցուցաբերում Քեյյարդի նկատմամբ, համարելով, որ վերը թվարկված հեղինակները միայն հուզական արժեքներ կրողներ չեն, այլ նրանք օժտված են խորաթափանց դատողությամբ հասարակական ճաշակի նկատմամբ /Boyd, 1983: 105/, ինչը սակայն որոշակի լարվածություն է ստեղծում բարձր արվեստի, ինտելեկտի և հասարակական ճաշակի միջև: Քեյյարդի ազգային և միջազգային մակարդակում մեծ ճանաչումը պայմանավորված է նրանով, որ այն արտացոլում է ժողովրդականը: Խուսափելով ծանրակշիռ պատկերների ստեղծումից՝

տարրական և ծայրահեղ զգացմունքային պատկերների ստեղծմամբ այս հոսանքը ևս մեկ կարևոր ներդրում է ունեցել Շոտլանդիայի, և, առաջին հերթին, Հայլենդսի առասպելի տարածման գործում: Հովվերգական համայնքի տեսլականը միտված էր դեպի կայունություն, ծխական կանոնի գերակայություն, այլ կերպ ասած, այն հուշեր էր արթնացնում նախկինում ունեցածի, կորուսյալ երջանկության մասին և ի հակադրություն արևմտյան գրական միտումների՝ այն առավելապես պատկերում է պարզ և ապահով հասարակություն՝ օժտված մշակութային ներդաշնակությամբ: Դիտարկելով Քեյլյարդն այս տեսակետից՝ կարելի է առավել լայն պատկերացում կազմել այն մասին, որ պարզունակ ոճով հանդերձ, այն այնուամենայնիվ հագեցած է սեփականության, բարոյականության, գենդերի վերաբերյալ պատկերացումներով, որոնցով և կերտվում են ազգային բարօրության, ինչպես նաև միասնականության, ապահովության և մաքրության մասին պատկերացումները: Այս գրականության մեջ համայնքը և վերջինիս կողմից զբաղեցրած տարածքը այն սկզբնակետերն են, որոնցից սկիզբ է առնում բնության և մարդու միջև ներդաշնակությունը (օրինակ այդպիսի վայր է Drumtochy-ն, որը չի ապականվել մոդեռնիզմի և քաղաքի բացասական ազդեցություններից, մի տեսակ հեռու է մնացել իրականությունից՝ վերածվելով մի վայրի, որտեղ չկան սոցիալական աստիճաններ և արտոնյալներ, որով և գործի է դրվում է երջանիկ ու ապահով երկրի (շոտլ.՝ *Merrie Auld Scotland*) գաղափարը: Ըստ Ջ. Բլեյքի՝ Քեյլյարդը որոշ առումներով նաև ընդվզում էր երկրի արդյունաբերականացման, և մյուս կողմից՝ պրեսբիտերականության դեմ: Ստեղծագործություններում գերիշխող է փոքր սահմանափակ և երևակայությունից զուրկ աշխարհի նկարագիրը, որը զուրկ է արտաքին աշխարհի ազդեցությունից /Blake, 1951/:

Ժամանակակից գրաքննադատ Ա. Նեշն առավել մեղմ վերաբերմունք է ցուցադրում Քեյլյարդի հանդեպ, քանի որ այն ունեցել է որոշակի դերակատարություն ռեգիոնալ նովելի զարգացման համար, որի ակունքները կարելի է գտնել Վ. Սքոթի նովելներում: Ըստ Ա. Նեշի, Քեյլյարդ բառ-հասկացությունը հանգեցրել է մի այնպիսի դիսկուրսի, որը հիմք է հանդիսացել 20-րդ դարի շոտլանդական մշակույթի զարգացման համար: Այն բանալի բառ է և շարունակում է մնալ շոտլանդական կյանքի տարբեր ասպարեզների համար վկայակոչման կարևոր եզրույթ /Nash, 2007/:

### **Քլայդսայդիզմ**

20-րդ դարի վերջին **Քլայդսայդիզմը** դարձավ շոտլանդական իրականության մեջ առավել գերիշխող դիսկուրսը (բառը սերում է Քլայդ (անգլ. Clyde) գետի անվանումից, որը չափազանց կարևոր էր 20-րդ դարում Գլազգոուի միջազգային նավավարության կենտրոն դառնալու համար): Քլայդսայդիզմն առավելապես աղերսվում է արականության,



աշխատող դասակարգի, արդյունաբերության հետ: Այն մասնավորապես միտված էր նկարագրելու 1950-ականների Գլազգոուի աղքատիկ միջավայրը, համատարած աշխատազրկությունը, ակոհոլիզմը և արականության հատկանիշի խիստ բարոյագրկումը՝ որպես հետևանք նավաշինարարության և ծանր արդյունաբերության ոլորտների անկման: Արականությունը դադարում էր դրսևորվել ծանր աշխատանքում, այն աստիճանաբար սկսեց նույնականացվել «կոշտ մարդու» (hard man) կերպարի հետ, որի համար չարչարանքը, ցինիզմն ու բռնությունը սեփական արժանապատվությունը վերականգնելու միակ միջոցներն էին: Քլայդսայդիզմը սկզբնական շրջանում առավելապես կիրառվել է բնութագրելու արական կողմնորոշում ունեցող մշակույթը, այնուհետև համարվել է առավելապես բացասական առնշանակություններով՝ նկատի ունենալով արդյունաբերական կոլապսը, հասարակական բողոքի ալիքները և գործազրկության աճը: Հիրավի, արդարացված է Դ. Մաքրոնի այն պնդումը, թե ի տարբերություն վերը քննարկված երկու դիսկուրսների, Քլայդսայդիզմն առավել իրական պատկեր է ստեղծում շոտլանդացու կերպարի մասին՝ կենտրոնանալով աշխատող միջին դասի իրական պատկերի վերակերտման վրա /McCrone, 2001/:

Այսպիսով, Հայլենդիզմը, Քեյլարդը, Քլայդսայդիզմը այն հիմնական հասկացություններ են, որոնց շուրջ ձևավորվել է ազգային դիսկուրսը: Այս հասկացությունները բազմիցս ենթարկվել են քննադատության, քանի որ դրանք ներկայացնում են առասպելականացված և կաղապարված պատկերներ, որոնք չի կարելի համարել ճշգրիտ: Սակայն, առավել լայն իմաստով, առասպելը և կաղապարված պատկերները կարևորվում են նրանով, որ վերջիններս կրում են խորհրդանշական ճշմարտություն, որի միջոցով հնարավոր է լինում բացատրել, թե ինչպիսին է տվյալ ժողովրդի մասին պատկերացումները և ընկալումները: Հայլենդիզմը, Քեյլարդը, Քլայդսայդիզմը լայնորեն կիրառվել են և՛ գրականության մեջ և՛ զանգվածային միջոցներում՝ մասնավորապես ֆիլմերում և զբոսաշրջության զարգացման նպատակով, և արդյունքում ստեղծվել է Շոտլանդիայի յուրօրնակ մի պատկեր՝ կտրված ողջ աշխարհից և մեկուսացած համաշխարհային զարգացումներից: Այս իմաստով, այս պատկերը կարելի է ընկալել որպես մի միջոց, որը նպաստել է ազգային ինքնության զարգացմանը և կայացմանը, քանի որ այս կայուն տարանջատիչ գիծն ընդունելի է եղել հասարակության կողմից: Շոտլանդական ազգային ինքնությունը բարդ ու երկար ուղի է անցել Միավորման ակտի ընդունումից ի վեր, որը մեծ հարված էր ազգային ինքնության պահպանմանը: Սակայն, այս հասկացությունների շնորհիվ 18-րդ դարի վերջից սկիզբ են առել ազգային դիսկուրսներ, որոնք իրենց ներդրումն են բերել ազգային և մշակութային ինքնության ձևավորման և պահպանման համար համաշխարհային մակարդակում: Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ազգային ինքնության ձևավորման գործում նշանակալից է ազգային դիսկուրսի

դերը և, որ վերջինս հզոր միջոց է ինքնության փոխակերպման համար: Սրա հետ մեկտեղ, գրականությանը, արվեստին և զանգվածային միջոցներին մեծ դեր է վերապահված դիսկուրսի տարածման և ազգային ինքնության ձևավորման, պահպանման և զարգացման գործընթացում:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դիսկուրս (անգլ.՝ discourse (a mode of organizing knowledge, ideas, or experience that is rooted in language and its concrete contexts (such as history or institutions))՝ լեզվի և դրա կոնկրետ համատեքստերի վրա հիմնված գիտելիք, գաղափարներ կամ փորձ /տե՛ս <https://www.merriam-webster.com/dictionary/discourse/>:
2. 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկիզբը նշանավորվեցին ազգայնականության տարբեր դրսևորումների և հայրենասիրության ոգու արթնացմամբ, որը սկիզբ առավ Եվրոպայում աճող ազգայնական շարժումներից և պայմանավորված էր բազմամշակութային գերտերությունների դեմ պայքարով: Սակայն շոտլանդացիները չընտրեցին պայքարի ուղին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բրիտանական ինքնությունն ընդհանուր ինքնություն էր, և շոտլանդացիներն այն ընդունել էին հաշվի առնելով վերջինիս տրամադրած մեծ հնարավորությունները: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ շոտլանդական հասարակությունը և մշակույթը ամբողջապես չեն ծուլվել ո՛չ անգլիականի, ո՛չ էլ բրիտանականի հետ:
3. Ջ.Մակֆերսոնի պնդմամբ այդ պատմությունները հին գաելերենով բանավոր պահպանված լեգենդների և առասպելների թարգմանություններ են, սակայն հետազոտողների մի մեծ խումբ այն համոզմանն է, որ դրանք իռլանդական լեգենդների վերաշարադրանք են և այդպիսով կասկածի տակ է դրված Մակֆերսոնի ստեղծագործության իսկությունը: Առավելապես տարածված է այն տեսակետը, որ էպիկական այդ պատմությունը պատմվում է հենց Մակֆերսոնի կողմից և որ հիմքում ընկած է իռլանդական դիցաբանությունը (*Haywood, Ian. The Making of History: A Study of the Literary Forgeries of James Macpherson and Thomas Chatterton in Relation to Eighteenth-Century Ideas of History and Fiction. Rutherford, NJ: Fairleigh Dickinson University Press, 1986.*):
4. Վ. Սքոթի նշանակալից նվաճումը կարելի է համարել Ջորջ 4-րդ արքայի այցը Էդինբուրգ 1822 թվականին, որը նախագծվել և իրականացվել է հենց իր կողմից: Ըստ Սքոթի՝ Շոտլանդիայի խորհրդանիշը հենց Հայլենդցու կերպարն էր, և նրա նպատակն էր ցույց տալ արքային Շոտլանդիան՝ հենց այդ կողմից: Ինքնության այսպիսի նկարագիրը խորթ էր Լոուլենդսում, սակայն արքայի այցի կապակցությամբ Հայլենդսին բնորոշ որոշ տարբերանշաններ տարածում գտան նաև այս շրջանում և ամբողջ քաղաքը զարդարվեց Հայլենդսի դրոշակներով,

խորհրդանիշներով և կտորեղենով: Նույնիսկ պատվիրվել էր հայլենդու հանդերձանք արքայի համար: Եվ եթե կարելի է առանձնացնել պատմական այն պահը, երբ հանդերձանքն ամրագրվեց շոտլանդացու գիտակցականում, ապա կարելի է ասել, որ հենց այս իրադարձությունների բերումով, քանի որ այդ օրվանից ի վեր բոլոր ազնվական ընտանիքներն իրենց համար նույնպես թարթանից հագուստ պատվիրեցին և հպարտ էին այն կրելու համար:

5. Մեկ այլ կարևոր դիսկուրս, որը մեծ նշանակություն է ձեռք բերել շոտլանդական մշակութային համատեքստում, *Բալմորալությունն է* (անգլ.՝ Balmorality, Բալմորալ դրյակի անվանումից), որն ամփոփում է շոտլանդական մշակույթի և ավանդույթների չափազանց իդեալականացումը ([www.collinsdictionary.com/dictionary/english/balmorality](http://www.collinsdictionary.com/dictionary/english/balmorality)): Վիկտորիա թագուհու և նրա՝ շոտլանդական բնության և Բալմորալ դրյակի հանդեպ հիացմունքով կրկին աճեց թարթանի և կիլտի հանրաճանաչությունը՝ հանգեցնելով հայլենդիզմին հավասարազոր մի նոր դիսկուրսի զարգացման:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blake G. Barrie and the Kailyard School. London: Arthur Barker, 1951.
2. Bold A. Modern Scottish Literature. London: Longman, 1983.
3. Campbell I. Kailyard. Edinburgh: Ramsay Head, 1981.
4. Caughie J. Scottish Television: What Would It Look Like? // Colin McArthur (ed.) *Scotch Reels: Scotland in Cinema and Television*. London: BFI, 1982.
5. Craig C. Myths Against History: Tartanry and Kailyard in 19th-century Scottish Literature // Colin McArthur (ed.) *Scotch Reels: Scotland in Cinema and Television*. London: BFI, 1982.
6. Devine T. The Highland Clearances // *Refresh* 4, spring, 1987.
7. Devine T. The Scottish Nation 1700-2007. Reissued edition. London: Penguin, 2006.
8. Knowles T. D. Ideology, Art and Commerce: Aspects of Literary Sociology in the Late Victorian Scottish Kailyard. Goeteburg: Acta Universitatis Gothoburgensis, 1983.
9. McArthur C. Scotland and Cinema: The Iniquity of the Fathers // Colin McArthur (ed.) *Scotch Reels: Scotland in Cinema and Television*. London: BFI, 1982.
10. McCrone D. Understanding Scotland: the Sociology of a Nation, second edition, London: Routledge, 2001.
11. Millar J. H. The Literature of the Kailyard // *New Review*, XXI, 1895.
12. Millar J. H. A Literary History of Scotland. London: T. Fisher Unwin, 1903.
13. Nash A. Kailyard and Scottish Literature. New York: Rodopi, 2007.

14. Schorer M. The Necessity of Myth // Murray H. (ed.) *Myth and Mythmaking*. Boston: Beacon Press, 1968.
15. Smout T.C. Perspective of the Scottish Identity // *Scottish Affairs* (6), 1994.
16. Trumpener K. National Character, Nationalist Plots: National Tale and Historical Novel in the Age of Waverly, 1806-1830. *ELH* (60), 1993.
17. Whithers Ch. The Historical Creation of the Highlands // Ian Donnachie and Christopher Whatley (ed.) *The Manufacture of Scottish History*. Edinburgh: Edinburgh University Press, 1992.
18. Womack P. Improvement and Romance: Constructing the Myth of the Highlands. London, 1989.

**М. САРКИСЯН – Этапы формирования и становления шотландской национальной идентичности в контексте национального дискурса.** – В статье рассматриваются ключевые понятия Хайлендизма, Кэльярда, Клайдсайдизма (городской репрезентативный дискурс) и их значение, а также роль этих понятий на исторических этапах становления и развития шотландской национальной идентичности. Цель исследования показать, как эти понятия повлияли на формирование национального дискурса и популяризацию представлений о Шотландии.

**Ключевые слова:** национальная идентичность, дискурс, Хайлендизм, Кэльярд, Клайдсайдизм

**M. SARGSYAN – The Stages of the Formation and Establishment of Scottish National Identity in the Context of National Discourse.** – The paper examines the key concepts of Highlandism, Keilyard, Clydesidsism and their meaning, as well as the role of these concepts in the historical stages of the formation and development of Scottish national identity. The aim of the research is to show how these concepts have influenced the formation of a national discourse and popularization of the image of Scotland.

**Key words:** national identity, discourse, Highlandism, Keilyard, Clydesidism

**Ներկայացվել է՝ 12.02.2019**  
**Երաշխավորվել է ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի կողմից**  
**Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019**